

ԶԵԿՈՒՅՑ

(թարմացված)

Լեռնային Ղարաբաղից բռնի
տեղահանված անձանց
իրավական աջակցության
վերաբերյալ

Հեղինակային խումբ՝

Արթուր Սաքունց

Անի Զատինյան

Ալբերտ Նալբանդյան

***Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Ժողովրդավարության
զարգացման հիմնադրամի օժանդակության շնորհիվ: Չեկույցում տեղ գտած
տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը
և կարող են չհամընկնել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի
դիրքորոշումների հետ:***

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2023թ. սեպտեմբերի 19-ին ՌԴ խաղաղապահ զորախմբի պատասխանատվության գոտում Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերն իրականացրեցին ռազմական գործողություններ Լեռնային Ղարաբաղի դեմ: Լեռնային Ղարաբաղի բնակչությունը զինված ուժի սպառնալիքի ներքո ստիպված լքեց իր տները և օրերի ընթացքում բռնի տեղահանվեց Հայաստանի Հանրապետություն:

Փաստացի փախստականի կարգավիճակում հայտնված մարդկանց աջակցելու նպատակով ՀՀ Կառավարությունը ձեռնարկեց լայնածավալ հումանիտար օգնության տրամադրման աշխատանքներ՝ ֆինանսական աջակցության տարբեր ծրագրերի իրականացում, կարիքի գնահատում, ստեղծեց ըստ գտնվելու վայրի գրանցման համակարգ՝ ՏԻՄ-երում և մարզպետարաններում ձևավորված Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց հաշվառման աշխատանքային խմբերի հիման վրա: Այս աջակցման ծրագրերի ընթացքը, ինչպես և բռնի տեղահանված անձանց իրավական կարգավիճակի հետ կապված առկա օրենսդրական բացերը բացասաբար ազդեցություն են ունենում մարդասիրական ճգնաժամի հետևանքով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց հումանիտար աջակցության արդյունավետության վրա: Այդ պատճառով իրավական աջակցության շրջանակներում Կազմակերպության կողմից իրավական կարգավորումների վերաբերյալ առաջարկություններ են ներկայացվում նաև պետական մարմիններին, համապատասխան փոփոխություններ կատարելու նպատակով:

2023 թվականի նոյեմբերից 2024 նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում Կազմակերպությունը տրամադրել է իրավական աջակցություն ՀՀ կառավարության որոշումներով հաստատված սոցիալական աջակցություններին բռնի տեղահանված անձանց մատչելիության ապահովման, հասանելիության և իրացման նպատակով:

Իրավական աջակցությունը տրամադրվել է Երևան քաղաքում և մարզերում թվով 12 կոնստակտային անձանց (յուրաքանչյուր մարզի համար մեկ կոնստակտային անձ, Երևան քաղաքում երկու կոնստակտային անձ) և թվով 7 իրավաբանների ներգրավմամբ, ովքեր ահազանգի միջոցով կապ են հաստատել իրենց գործունեության մարզում բնակվող բռնի տեղահանված անձանց հետ, կատարել տնայցեր, կարիքների գնահատում, անհրաժեշտության դեպքում կազմվել են իրավաբանական նշանակության փաստաթղթեր ուղղված ՀՀ համապատասխան գերատեսչություններին բռնի տեղահանված արցախցիների խնդիրների լուծման հարցերով:

Նշված ժամանակահատվածում Կազմակերպության կոնստակտային անձինք և իրավաբանները խորհրդատվություն են տրամադրել 1967 բռնի տեղահանված անձանց:

Իրավախորհրդատվության արդյունքում, արձանագրված խնդիրների շրջանակներում Կազմակերպությունը տարբեր պետական մարմիններ է ուղարկվել 444 գրություն և 3 հայցադիմում:

Կազմակերպության պաշտոնական կայքում¹ հրապարակվել է «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության վիճակի և պետական աջակցության ծրագրերին նրանց հասանելիության խնդիրների մասին» զեկույցը, որում ամփոփված են բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության շրջանակներում արձանագրված համակարգային խնդիրները և դրանց լուծման ուղղությամբ անհրաժեշտ գործողությունների առաջարկությունները:

Կազմակերպությունը, հաշվի առնելով բռնի տեղահանվածների իրավունքների իրականացման հետ կապված դեռևս չլուծված խնդիրները, մշակեց գործունեության նոր ռազմավարություն՝ ընդլայնելով աջակցության շրջանակները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բռնի տեղահանման ընթացքում անձինք հնարավորություն չեն ունեցել իրենց հետ վերցնելու իրավական

¹ <https://hcav.am/nk-reopr-13-12-2024/>

Նշանակություն ունեցող կարևոր փաստաթղթեր՝ այդ թվում ծննդյան, մահվան, ամուսնության վկայականներ, աշխատանքային գրքույկներ և այլ պաշտոնական փաստաթղթեր, նրանք Հայաստանի Հանրապետությունում բախվում են մի շարք իրավական խնդիրների: Մասնավորապես՝ այդ փաստաթղթերի բացակայությունը խոչընդոտում է ՀՀ քաղաքացիություն ստանալու, պետական կենսաթոշակներից, նպաստներից և այլ սոցիալական երաշխիքներից օգտվելու իրավունքից: Նման պայմաններում մի շարք իրավունքների իրացումը հնարավոր է միայն դատարանի կողմից անհրաժեշտ փաստերը հաստատված ճանաչելու վերաբերյալ դատական ակտի հիման վրա:

Սույն զեկույցում ներկայացված է Կազմակերպության կողմից տրամադրված իրավական աջակցության արդյունքներն ու արձանագրված խնդիրները, իրականացված գործողությունները, պետական մարմիններին ներկայացված հարցումների արդյունքում կազմված վիճակագրությունները, ՀՀ իրավական ակտերի նախագծերի միասնական հարթակում իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ներկայացված ներկայացված առաջարկությունները և դրանց վրա արված փոփոխությունները:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՐՄԻՑ ԲՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՏՐԱՍՄԱՐԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՍՓՈՓ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2024 թվականի նոյեմբեր ամսից սկսած Կազմակերպությունը բռնի տեղահանված անձանց իրավական աջակցության շրջանակներում իրականացնում է ՀՀ կառավարության կողմից բռնի տեղահանված անձանց համար իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերի հասանելիության ապահովում և այդ ծրագրերի գնահատում, դրանց փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարությանը, ինչպես նաև իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման նպատակով գործողություններ, այդ թվում դատական ատյաններում:

Կազմակերպության կողմից իրավական աջակցությունը տրամադրվում է 2 փաստաբանի և 1 իրավաբան մասնագետի ներգրավմամբ:

Բռնի տեղահանված անձանց հետ հանդիպումներ են կազմակերպվել Կազմակերպության Վանաձորի և Երևանի գրասենյակներում, իսկ հանդիպումները գրասենյակներում կազմակերպելու անհնարինության պայմաններում իրականացվել են առցանց տարբերակով, ինչպես նաև բռնի տեղահանվածների խնդիրներին վերաբերվող այլ հանդիպումների ժամանակ:

2024 թվականի նոյեմբերից մինչև հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում իրավաբանական խորհրդատվություն է տրամադրվել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 78 անձանց որից՝

- 15 խորհրդատվություն սեփականության իրավունքի վերաբերյալ,
- 33 խորհրդատվություն սոցիալական աջակցություններից, ՀՀ պետական կենսաթոշակներից և նպաստներից օգտվելու իրավունքի իրացման մասին,
- 7 խորհրդատվություն աշխատանքային իրավունքի վերաբերյալ,
- 9 խորհրդատվություն պատշաճ վարչարարության բացակայության մասին,
- 14 վերաբերել է իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատմանը:

ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- **Քաղաքացիությունն ստանալու հետ կապված**

ՀՀ Կառավարության 14 հունիսի 2024 թվականի N 898-L որոշմամբ հաստատվեց ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի իրականացման կարգը, համաձայն որի ծրագրի շահառու կարող են հանդիսանալ այն անձինք, ովքեր ունեն ՀՀ քաղաքացիություն, իսկ դրա բացակայության պայմաններում շահառու հանդիսանալու դիմումը մերժվում է:

ՀՀ Կառավարության 23 նոյեմբերի 2007 թվականի N 1390-Ն որոշմամբ հաստատված է ՀՀ քաղաքացիությունն ստանալու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, համաձայն որի բացի անձը հստատող փաստաթղթերը, անհրաժեշտ է ներկայացել է նաև հետևյալ իրավական փաստաթղթերը.

- Ճննդյան վկայականը և դրա պատճենը,
- ամուսնության վկայականը և դրա պատճենը,
- ամուսնու անձնագրի պատճենը և դրա հայերեն թարգմանությունը,
- ճնողի (պապի, տատի, հարազատ քրոջ կամ եղբոր) ճննդյան վկայականը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ, որում առկա է ազգությամբ հայ լինելու վերաբերյալ նշում: Համահայր կամ համամայր եղբոր կամ քրոջ ճննդյան վկայականը կամ ազգությունը հաստատող այլ փաստաթուղթն անձի համար կարող է հանդիսանալ ազգությունը հաստատող փաստաթուղթ, եթե եղբոր կամ քրոջ ազգությամբ հայ լինելը պայմանավորված է նրանց համատեղ ճնողի ազգությամբ:

Այսինքն, եթե բացակայում են վերոնշյալ փաստաթղթերով փաստական տվյալների հաստատման հնարավորությունը, անձինք չեն կարողանա դիմել ՀՀ

քաղաքացիությունն ստանալու համար, իսկ վերոնշյալ փաստերի հաստատումը տեղի է ունենում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված հատուկ վարույթի պայմաններում:

- **ՀՀ պետական կենսաթոշակներից օգտվելու իրավունքի հետ կապված**

ՀՀ պետական կենսաթոշակների մասին օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև 1992 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթն աշխատանքային գրքույկն է,

Նույն հոդվածի 1.1 կետի համաձայն՝ 1992 թվականի հունվարի 1-ից մինչև 2013 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթը՝ աշխատանքային գրքույկն է(...):

Հետևաբար, աշխատանքային գրքույկների բացակայության պայմաններում անձինք զրկվում են կենսաթոշակ ստանալու իրենց իրավունքից, և որոշակի ժամկետում աշխատած լինելու փաստն ու սոցիալական ապահովության իրավունքի իրացումը կարող են հաստատել միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով:

- **ՀՀ պետական նպաստներից օգտվելու իրավունքի հետ կապված**

ՀՀ պետական նպաստների մասին օրենքը պետական նպաստի տեսակ է սահմանում կերակրողին կորցնելու դեպքում նպաստը, որի նշանակման համար իրավունք ունի մահացած կերակրողի՝ 18 տարին չլրացած երեխան՝ մինչև 18 տարին լրանալը(...):

Հետևաբար, մահացածի երեխա լինելու փաստի հաստատման հիմքը հանդիսանում

է ծննդյան վկայականը, որտեղ նշվում է ծնողների տվյալները, սակայն ԼՂ-ում մարտական գործողությունների ժամանակ, կամ դրանց հետևանքով առաջացած այլ պայմաններում, մահացած ծնողը չի հաստատել երեխայի հայրությունը և մյուս

Ծնողը չի կարողանում օգտվել կերակրողին կորցնելու դեպքում պետական նպաստից: Պետական նպաստից օգտվելու հիմք հանդիսացող իրավական ճանապարհը դատական կարգով սերման փաստը հաստատելն է:

- **Ժառանգության իրավունքի հետ կապված**

Կազմակերպությունը ելնելով մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության սկզբունքներից հետամուտ է այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանման հետևանքով անձինք, ովքեր ի վիճակի չեն տիրապետելու կամ տնօրինելու իրենց գույքը, հանդիսանում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով երաշխավորված սեփականության իրավունքի խախտման՝ շարունակական խախտման զոհ:

Բռնի տեղահանված անձանց սեփականության իրավունքը որևէ իրավական հիմքով չի դադարել: Նրանք շարունակում են համարվել Լեռնային Ղարաբաղում իրենց թողած անշարժ և շարժական գույքի օրինական սեփականատերեր:

Սեփականատիրոջ մահվան դեպքում նրա իրավահաջորդներն ունեն ժառանգություն ընդունելու լիարժեք իրավունք՝ անկախ տվյալ գույքի գտնվելու վայրից, սակայն հաճախ նոտարները հրաժարվում են ժառանգություն ընդունելու դիմում վերցնել:

Վերոգրյալի հիման վրա արձանագրում ենք, որ բռնի տեղահանման ժամանակ անձինք փաստացի հնարավորություն չունենալով իրենց հետ վերցնել իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթեր, խնդիրներ են ունենում ՀՀ քաղաքացիություն ստանալու, ՀՀ պետական կենսաթոշակներից և նպաստներից օգտվելու և ժառանգություն ընդունելու գործընթացում: Կարևոր է արձանագրել, որ ԼՂ-ի ԶԿԱԳ տեղեկատվական բազաները փոխանցված չեն ՀՀ-ը, իսկ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատումը վերապահված է նոտարական գրասենյակներին և դատարանին:

ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ

ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Կազմակերպության կողմից իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման համար ՀՀ առաջին աստիճանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հատուկ վարույթի քննության կարգով ներկայացվել է 8 դիմում:

1) Երեխաների սերման փաստի հաստատման պահանջի հետ կապված

1.1) Դիմումներից մեկով դատարանը բավարարել է ներկայացված պահանջը, մասնավորապես, ԼԴ-ից բռնի տեղահանված մայրը հայտնել է, որ իր հանգուցյալ ամուսնու հետ գտնվել է փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ, և երբ ինքը գտնվել է հղիության 3-րդ ամսում, ամուսինը մահացել է մարտական դիրքում, որին հաջորդել է 2023 թվականի բռնի տեղահանումը, և վերջինիս երեխան ծնվել է ՀՀ տարածքում: Սոցիալական աջակցությունների շահառու ճանաչվելու համար անհրաժեշտ է եղել երեխայի հայրության փաստի հաստատում, որը գործող իրավակարգավորման պայմաններում հնարավոր է հաստատել միայն դատական կարգով, Կազմակերպությունը դիմած քաղաքացու համար պատրաստվել է հայցադիմում և ներկայացվել դատարան:

Դատարանը, գործի քննության փուլում արժանահավատ է համարել վկաների կողմից ներկայացված ցուցմունքները, որի հիմքով հաստատել է երեխայի սերման փաստը:

1.2) Հաջորդ Դիմումատուն հայտնել է, որ ունի 8 անչափահաս երեխա, երեխաների հայրը մահացել է 2023 թվականի սեպտեմբերի 19-ի ադրբեջանական ագրեսիայի հետևանքով պատերազմական գործողությունների ընթացքում, սակայն երեխաների սերման փաստի հաստատման դիմումը դատարանը վերադարձրել է այն հիմնավորմամբ, որ քաղաքացին դատարան հայցադիմում ներկայացնելու համար պետական

տուրք վճարել է 20.000 ՀՀ դրամ, մինչդեռ՝ 20.000 ՀՀ դրամը հանդիսանում է 1 պահանջի համար գանձվող գումար, իսկ սույն դեպքում առկա է 8 պահանջ, որի դեպքում ըստ դատարանի որոշման անհրաժեշտ էր վճարել 160.000 ՀՀ դրամ:

Համաձայն չլինելով Դատարանի այդ որոշման հետ, բայց և գիտակցելով, որ վերաքննիչ դատարան դիմելը լրացուցիչ ֆինանսական բեռ է դառնալու անձի համար, նոր դիմում ներկայացրեցվեց դատարան, որը մակագրվել էր այլ դատավորի, այս դեպքում դատարանը այն վարույթ ընդունեց հիմք ընդունելով նախապես վճարված 20.000 ՀՀ դրամ պետական տուրքը:

2) Աշխատանքային ստաժի հաստատման հետ կապված

Կազմակերպություն դիմած անձը հայտնել է, որ ունի 19 տարվա աշխատանքային ստաժ, սակայն բռնի տեղահանման պայմաններում իր հետ չի վերցրել իր աշխատանքային գրքույկը, իսկ աշխատանքային ստաժի տեղեկատվական բազաներ կամ արխիվային տվյալներ ՀՀ-ը մինչ օրս փոխանցված չեն, հետևաբար հիշյալ փաստերի հաստատումը ենթակա է եղել միայն դատական կարգով:

Դատարանը մեկ վկայի ցուցմունքի հիման վրա կայացրել է Դիմումը բավարարելու մասին որոշում և դատական ակտը գտնվում է կատարման փուլում:

3) Ժառանգության իրավունքի հետ կապված

Կազմակերպություն դիմած քաղաքացու ամուսինը մահացել է 2023 թվականի սեպտեմբերի 19-ի աղբյուրազանցական ագրեսիայի հետևանքով ծավալված պատերազմական գործողությունների ընթացքում, որից հետո վերջինս իր անչափահաս երեխաների հետ բռնի տեղահանվել է Հայաստան, որտեղ էլ փորձել է ընդունել ամուսնու ժառանգությունը. այն է ավտոմեքենան և Լեռնային Ղարաբաղում թողած անշարժ գույքը: ՀՀ նոտարական

գրասենյակում հրաժարվել են հաստատել ժառանգությունը, հարցի լուծումը հնարավոր է եղել միայն դատական կարգով, և դատարանը կայացված վճռով հաստատել է, որ դիմողն իր հանգուցյալ ամուսնու ժառանգության զանգվածի մեջ մտնող այլ գույքի՝ ոսկյա իրերի սահմանված ժամկետում փաստացի տիրապետման հիմքով ընդունել է նրա ժառանգությունը, ուստի դիմումը բավարարվել է:

4) Ծննդյան ակտի գրանցումը հաստատելու հետ կապված

Դիմողը ծնվել է 1956 թ-ին Ադրբեջանի ԽՍՀ Բաբու քաղաքում: Ծնունդը գրանցվել է Բաբու քաղաքի ԶԿԱԳ մարմնում: Բռնի տեղահանման ժամանակ կորցրել է ծննդյան վկայականը, խնդիրը լուծելու համար դիմել է ԶԿԱԳ գործակալություն, սակայն դիմումը մերժվել է գրանցումների բացակայության պատճառով:

Միաժամանակ նշել է, որ նշված փաստի հաստատումն անհրաժեշտ է ՀՀ քաղաքացիություն ստանալու համար, սույն գործի՝ քննության փուլում դատարանը արժանահավատ է համարել վկաների ներկայացված ցուցմունքները, որի հիմքով հաստատել է դիմողի ծննդյան փաստը: Արդյունքում Կազմակերպություն դիմելուց 2 ամիս անց ՀՀ նախագահի հրամանագրով քաղաքացուն շնորհվել է ՀՀ քաղաքացիություն:

5) Մահվան ակտի գրանցումը հաստատելու հետ կապված

Երեք բռնի տեղահանված անձինք ցանկացել են հաստատել իրենց ծնողների մահվան փաստը, որպեսզի կարողանան ՀՀ ԱՆ ԶԿԱԳ մարմնում ստանալ մահվան վկայական, որն էլ իր հերթին հարկավոր էր ՀՀ քաղաքացիություն ստանալու համար, ներկայացված 1 դիմում դատարանի կողմից բավարարվել է, մյուսները դատարանի քննության փուլում են գտնվում: *Այս փուլում կարևոր է ընդգծել, որ նման փաստերի հաստատման դեպքում դատարանները ցուցաբերում են միատեսակ մոտեցում, հատուկ*

վարույթի այս գործերը քննվում են հնարավորինս արագ դատական ակտերի կայացումը միջինում տևում է 3 ամիս:

ՊԱՏՇԱՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՊԱՆՄԱՆ ՎԻՃԱԿԸ

Կազմակերպությունը իրավական աջակցության գործընթացում արձանագրել է պետական մարմինների կողմից պատշաճ վարչարության հիմնարար սկզբունքների խախտման դեպքեր, որի պատճառով մինչև կազմակերպություն դիմելը բռնի տեղահանված անձինք առնչվում էին մի շարք խնդիրների: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիությունը ստանալու, ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված սոցիալական աջակցության ծրագրերից օգտվելու, ինչպես նաև ԼՂ-ում բռնի տեղահանման հետևանքով թողած, սակայն ՀՀ-ում գրանցված տրանսպորտային միջոցների խոտանման դեպքերում:

ՀՀ վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի համաձայն «Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:»

ՀՀ քաղաքացիությունը ստանալու նպատակով ԼՂ-ից բռնի տեղահանված անձը ՀՀ քաղաքացիությունը ստանալու համար 2024 թվականի հունիս ամսին դիմել է անձնագրային բաժին, սակայն նրանից պահանջել են ներկայացնել ծնողների ամուսնության վկայական, այն դեպքում, երբ ծնողների ամուսնությունը պետական գրանցում ստացած չի եղել, ուստի այն անհնար է եղել որևէ կերպ ներկայացնել: Շուրջ 9 ամիս տևած անհարկի ձգձգումներից ու բարդություններից հետո անձը դիմել է Կազմակերպության: Տրամադրված իրավական աջակցության արդյունքում ՀՀ ներքին գործերի նախարարությունը ներկայացվել է պահանջ, որ վարչական մարմինը պետք է հավաստի համարի անձի ներկայացրած տվյալները, եթե վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Կարևոր է արձանագրել, որ վարչարարության այս սկզբունքի կիրառումը պետք է առաջնային լինի բռնի տեղահանված անձանց ՀՀ քաղաքացիության ծեռք բերման գործընթացում: Վարչական մարմինը պատշաճ վարչարարության իրականացման սկզբունքի համաձայն պետք է առաջնորդվի անձի համար բարենպաստ որոշումներ ընդունելով, հիմքում դնելով այն փաստը, որ տեղահանման ընթացքում անձինք փրկվելով ադրբեջանական ագրեսիայից ու ռազմական գործողություններից՝ երբ վտանգված է եղել նրանց կյանքն ու ազատությունը, չեն կարող ներկայացնել պահանջվող փաստաթղթերը, քանի որ պատշաճ ժամանակ չեն ունեցել դրանք իրենց հետ վերցնելու համար: Նման իրավիճակներում պետությունն իր պոզիտիվ պարտականությունների կատարման ընթացքում պետք է որդեգրի անհատի իրավունքները հարգող և փաստական իրավիճակին համարժեք վարվելակերպ:

ՄԻԵԿ 13-րդ հոդվածը սահմանում է ազգային մակարդակում Կոնվենցիայով նախատեսված իրավունքների և ազատությունների եռությունը իրացնելու համար իրավական պաշտպանության միջոցների առկայությունը՝ անկախ դրանց ապահովված լինելուց: Այս դրույթով պետությունը պարտավոր է տրամադրել իրավական պաշտպանության միջոցներ՝ Կոնվենցիայի համաձայն «վիճելի բողոքի» եռությունը քննարկելու նպատակով համապատասխան, արդյունավետ, իրականանալի ընթացակարգեր տրամադրելու համար: Կոնվենցիայի 13-րդ հոդվածով նախատեսված պետության պարտավորությունների շրջանակը տարբերվում է՝ կախված դիմորդի բողոքի բնույթից: Այնուամենայնիվ, 13-րդ հոդվածով սահմանված իրավական պաշտպանության միջոցը պետք է լինի «արդյունավետ» ինչպես գործնականում, այնպես էլ իրավունքի երաշխավորման տեսանկյունից: 13-րդ հոդվածի իմաստով «միջոցառման» «արդյունավետությունը» կախված չէ դիմորդի համար բարենպաստ արդյունքի անկասկածությունից: Այդ դրույթում նշված «մարմինը» պարտադիր չէ, որ լինի դատական մարմին, բայց եթե այն այդպիսին չէ, ապա նրա լիազորությունները և նրա կողմից տրամադրվող երաշխիքները կարևոր են որոշելու համար, թե արդյոք նրա առջև դրված իրավական պաշտպանության միջոցն արդյունավետ է: Բացի այդ, նույնիսկ եթե

մեկ միջոցն ինքնին ամբողջությամբ չի բավարարում 13-րդ հոդվածի պահանջները, ներպետական օրենսդրությամբ նախատեսված միջոցների համակցությունը կարող է դա անել (տե՛ս, ի թիվս շատ այլ աղբյուրների, *Կուդլա ընդդեմ Լեհաստանի* [Ընդհանուր պատկանելիություն], թիվ 30210/96 , § 157, ՄԻԵԴ 2000 - XI):

ՄԻԵԿ Հոդված 1-ի ուժով (որը սահմանում է. «Բարձր պայմանավորվող կողմերը իրենց իրավասության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են սույն Կոնվենցիայի I բաժնում սահմանված իրավունքներն ու ազատությունները»), երաշխավորված իրավունքների և ազատությունների իրականացման և կիրառման հիմնական պատասխանատվությունը կրում է ազգային իշխանությունը: Այսպիսով, բողոքարկման դատական մեխանիզմը օժանդակ է մարդու իրավունքների պաշտպանության ազգային համակարգերին, որը սահմանված է Կոնվենցիայի 13-րդ և 35-րդ հոդվածների 1-ին կետերում (տե՛ս վերևում մեջբերված *Կուդլա* , § 152):

Կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն, Պայմանավորվող պետությունների պարտավորությունն է «ապահովել» («ֆրանսերեն՝ *reconnaître*») իրենց «իրավասության» շրջանակներում գտնվող յուրաքանչյուրի համար Կոնվենցիայի I բաժնում սահմանված իրավունքներն ու ազատությունները (տե՛ս *Soering v. the United Kingdom* , 7 հուլիսի 1989թ., § 86, շարք A համար 161, և *Banković and Others v. Belgium and Others* (որոշում), [Ընդհանուր գործ], համար 52207/99 , § 66, ՄԻԵԴ 2001-XII): Իրավասության իրականացումը անհրաժեշտ պայման է, որպեսզի Պայմանավորվող պետությունը կարողանա պատասխանատվություն կրել իրեն վերագրվող գործողությունների կամ անգործության համար, որոնք հիմք են հանդիսանում Կոնվենցիայով ամրագրված իրավունքների և ազատությունների խախտման մեղադրանքի համար (տե՛ս *Ilaşcu and Others v. Moldova and Russia* [Ընդհանուր ընդհանուր գործ], համար 48787/99 , § 311, ՄԻԵԴ 2004 - VII):

Պետության իրավասությունը, 1-ին հոդվածի իմաստով, էապես տարածքային է (տե՛ս *Բանկովիչը և այլք* , վերևում նշված, §§ 61 և 67, և *Իլաշկու և այլք* , վերևում նշված, § 312): Ենթադրվում է, որ այն սովորաբար իրականացվում է պետության

ամբողջ տարածքում (տեղում նշված, և տե՛ս *Ասասնիծեն ընդդեմ Վրաստանի* [ԸԸ], թիվ 71503/01 , § 139, ՄԻԵԴ 2004-II):

ՄԻԵԴ-ը բազմիցս արտահայտել է այն դիրքորոշումը, որի համաձայն Կոնվենցիայի 13-րդ հոդվածը երաշխավորում է ազգային մակարդակում Կոնվենցիայով նախատեսված իրավունքների և ազատությունների եռթյան ապահովման համար իրավական պաշտպանության միջոցի առկայությունը:

Այսպիսով, 13-րդ հոդվածը սահմանում է ներպետական իրավական պաշտպանության միջոցի տրամադրման պահանջ՝ Կոնվենցիայի համաձայն «վիճարկելի բողոքի» եռթյան հարցը լուծելու և համապատասխան միջոցներ տրամադրելու նպատակով: 13-րդ հոդվածով նախատեսված Պայմանավորվող պետությունների պարտավորությունների շրջանակը տարբերվում է՝ կախված դիմորդի բողոքի բնույթից. սակայն, 13-րդ հոդվածով պահանջվող իրավական պաշտպանության միջոցը պետք է լինի «արդյունավետ» ինչպես գործնականում, այնպես էլ իրավական առումով (նույն տեղում, § 157):

13-րդ հոդվածի իմաստով «միջոցառման» «արդյունավետությունը» կախված չէ դիմորդի համար բարենպաստ արդյունքի անկասկածությունից: Այդ դրույթում նշված «մարմինը» պարտադիր չէ, որ լինի դատական մարմին, բայց եթե այն այդպիսին չէ, ապա դրա լիազորություններն ու երաշխիքները, որոնք այն տրամադրում է, կարևոր են որոշելու համար, թե արդյոք դրա առջև դրված միջոցը արդյունավետ է: Բացի այդ, նույնիսկ եթե մեկ միջոցն ինքնին ամբողջությամբ չի բավարարում 13-րդ հոդվածի պահանջները, ներպետական օրենսդրությամբ նախատեսված միջոցների համակցությունը կարող է դա անել (տե՛ս *Gebremedhin [Gaberamadhien] ընդդեմ Ֆրանսիայի*, թիվ 25389/05, § 53, ՄԻԵԴ 2007 - II):

Որպեսզի 13-րդ հոդվածով պահանջվող միջոցը լինի արդյունավետ, այն պետք է հասանելի լինի ինչպես գործնականում, այնպես էլ օրենքով, մասնավորապես այն իմաստով, որ դրա իրականացումը չպետք է անհիմն խոչընդոտվի պատասխանող պետության իշխանությունների գործողություններով կամ անգործությամբ (տե՛ս *Չաբըջը ընդդեմ Թուրքիայի* [GC], թիվ 23657/94 , § 112, ՄԻԵԴ 1999 - IV):

13-րդ հոդվածը պահանջում է ներպետական իրավական պաշտպանության միջոցի ապահովում, որը թույլ կտա իրավասու ազգային մարմինն ինչպես քննարկել համապատասխան Կոնվենցիայի բողոքի եռությունը, այնպես էլ տրամադրել համապատասխան միջոցներ, չնայած Պայմանավորվող պետություններին որոշակի հայեցողություն է տրվում այս դրույթով իրենց պարտավորությունները կատարելու եղանակի վերաբերյալ (տե՛ս *Ջաբարի ընդդեմ Թուրքիայի* , թիվ 40035/98 , § 48, ՄԻԵԴ 2000 - VIII):

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել վերականգնողական միջոցի արագությանը, քանի որ չի բացառվում, որ դրա չափազանց տևողությամբ կարող է խաթարվել վերականգնողական միջոցի համարժեք բնույթը (տե՛ս *Դորան ընդդեմ Իռլանդիայի* , թիվ 50389/99 , § 57, ՄԻԵԴ 2003 - X):

Վկայակոչված սկզբունքի խախտում է արձանագրվել նաև ՀՀ կառավարության կողմից սահմանված սոցիալական աջակցությունների տրամադրման գործընթացում: Մասնավորապես, աջակցության շահառուին և նրա անչափահաս երեխաներին դադարեցվել է տրամադրվել սոցիալական աջակցություն այն հիմքով, որ վերջիններս բացակայել են Հայաստանի Հանրապետությունից: Սակայն, դիմումատուի կողմից ներկայացված տվյալների համաձայն նա ոչ միայն չի լքել ՀՀ տարածքը, այլև մշտապես գտնվել է իր բնակության վայրում: Վարչական մարմինը չի ընդունել ներկայացված տվյալները որպես հավաստի, ինչի հիման վրա էլ մերժել է սոցիալական աջակցության տրամադրումը:

Քաղաքացին դիմել է ՀՀ Ազգային անվտանգության ծառայությանը՝ երկրից չբացակայելու վերաբերյալ տեղեկանք ստանալու նպատակով, որի հիման վրա այս պահին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում իրականացվում է փաստերի ուսումնասիրություն:

Կազմակերպությունը մեկ այլ գործով դիմել է Վարչական դատարան՝ անգործունակ ճանաչված անձի սոցիալական ապահովության իրավունքի խախտումը վերացնելու հիմքով: Մասնավորապես՝ բռնի տեղահանումից հետո անձը ճանաչվել է ՀՀ կառավարության 1763-L որոշման շահառու, սակայն

վարչական մարմինը, առանց որևէ օբյեկտիվ հիմնավորման և ոչ իրավաչափ կերպով, շուրջ չորս ամիս չի հատկացրել աջակցության գումարը: Այս ընթացքում անձը մահացել է, և նրա խնամակալը Կազմակերպության աջակցությամբ դիմել է ՀՀ վարչական դատարան՝ հասանելիք և չվճարված սոցիալական աջակցության գումարը ստանալու պահանջով, դատարանը ներկայացված հայցադիմումը ընդունել է վարույթ:

ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Քնակարանային ապահովման ծրագրի հետ կապված

ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 16-ի թիվ 710-Լ որոշմամբ հաստատվել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների քնակարանային ապահովման պետական աջակցության ծրագիրը, որի նպատակն է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ՀՀ-ում սոցիալական և տնտեսական ներառումը՝ Հայաստանի Հանրապետությունում երկարաժամկետ բնակության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու միջոցով:

ՀՀ կառավարության 2024 թվականի հունիսի 14-ի թիվ 898-Լ որոշմամբ հաստատվել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների քնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի իրականացման կարգը:

Դիմումը մերժվում է եթե դիմողը կամ ընտանիքի որևէ անդամը 2023 թվականի սեպտեմբերի 19-ի կամ դիմելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետությունում ունի սեփականության կամ ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով (50 տոկոս և ավելի մասնաբաժնով) պատկանող բնակության համար նախատեսված բնակելի անշարժ գույք: Սեփականություն ունենալու մասին տեղեկատվությունը տրամադրում է ՀՀ կադաստրի կոմիտեն, սակայն գույքի նպատակային նշանակության մասին տեղեկատվություն չի տրամադրվում և մերժումը բացառելու համար չի դիտարկվում այն տարբերակները, երբ գույքը բնակության համար պիտանի չէ:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական ծրագրի շահառու հանդիսանալու մերժման հիմքում նշված է օպերատիվ շտաբի կողմից տվյալների բացակայությունը: Մինչդեռ, դեռևս նախորդ ծրագրի իրականացման փուլում արձանագրել ենք, որ օպերատիվ շտաբը տեղահանված բոլոր անձանց տվյալները չի հավաքագրել և այդ հիմքով մի շարք անձինք չեն օգտվել նաև սոցիալական աջակցության ծրագրերից և, որ ամենակարևորն է, այս պահին օպերատիվ շտաբը գործող կառույց չէ, որպես այդպիսին գոյություն չունի, սակայն իրավունքների և ազատությունների սահմանափակում է տեղի ունենում հղում կատարելով փաստացի գոյություն չունեցող կառույցի տվյալների վրա:

Կառավարության որոշմամբ սահմանված է, որ ծրագրի շահառու չեն կարող համարվել այն տեղահանված անձինք, ովքեր չունեն ԶՀ քաղաքացիություն: Կազմակերպությունը այս դրույթը խտրական համարելով առանձին գրությամբ դիմել է ԶՀ կառավարության «Հումանիտար կենտրոն»-ի աշխատանքները համակարգող փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանին, դրանում վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումներ, որոնք վերաբերում են փախստականի և այդ երկրի քաղաքացիների հավասար իրավունքներ ունենալուն և այդ հիմքով խտրականությունը բացառելուն:

Կազմակերպությունը գտնում է, որ որոշմամբ սահմանված պարտադիր քաղաքացիության դրույթը չունի ողջամիտ և օբյեկտիվ հիմնավորում:

Համաձայն ԶՀ կառավարության «Հումանիտար կենտրոն»-ի պատասխանի «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի» շրջանկներում ԶՀ քաղաքացի լինելու պարտադիր պահանջը պայմանավորված է այն հանգամանքով, որ բնակարանային ապահովումը նպատակ ունի աջակցել ծրագրի պոտենցիալ այն շահառուներին, որոնց աշխատելու ապրելու և կրթվելու երկարաժամկետ պլանները կապված են Հայաստանի Հանրապետության հետ: Միաժամանակ, ծրագրի հիմնական նպատակը Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց սոցիալական և տնտեսական ներառումն է՝ Հայաստանի

Հանրապետությունում երկարաժամկետ բնակության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու միջոցով:

Չնայած ներկայացված պատասխանի և դրանում ներկայացված հիմնավորմանը, է կազմակերպությունը գտնում է, որ պարտադիր քաղաքացիությունն ստանալու պայմանը փախստականների նկատմամբ խտրական մոտեցում է:

Կարևոր ենք համարում նաև արձանագրել, որ ՀՀ կառավարության 2025 թվականի հուլիսի 3-ի N 901-L որոշմամբ² հաստատվել են բնակարանային ապահովման ծրագրում կատարված փոփոխությունները (սույն տեղեկանքի մշակման փուլում), համաձայն որի հանվել են ծրագրի իրականացման փուլերը, ինչը կազմակերպության գնահատմամբ զգալիորեն նպաստելու է իրականացվող ծրագրի արդյունավետության բարձրացմանը:

Առանձնակի ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ կարգով նախատեսվում է միջգերատեսչական հանձնաժողովի ձևավորում, որը կարող է եապես բարելավել ծրագրի հասանելիությունն ու նպաստել ծրագրի ընթացքում առաջացած խնդիրների արտարադատական կարգով լուծմանը:

² [Կառավարության որոշումներ - Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային կառավարում | e-gov](https://www.hcav.am/en/press-releases/2025/07/03/901-l-decision-on-residence-permit-application-procedure/)

ՆՈՏԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՐՔԻ ՀԵՏ ԿԱՊԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ

Հատկանշական է, որ բռնի տեղահանման արդյունքում անձինք իրենց, կամ իրենց ընտանիքի անդամների իրավահաստատող որոշակի կարևոր փաստաթղթեր (ծննդյան վկայական, ամուսնության վկայական, մահվան վկայական, աշխատանքային գրքույկ և այլն) թողել են Լեռնային Ղարաբաղում, և այլևս որևէ կերպ չեն կարող ստանալ դրանց կրկնօրինակները, քանի որ Լեռնային Ղարաբաղի տեղեկատվական բազաները փոխանցված չեն Հայաստանի Հանրապետությունը:

Ստեղծված իրավիճակում քաղաքացիաիրավական գործողություններ կատարելու, կամ ՀՀ քաղաքացիություն ստանալու անհրաժեշտ փաստաթղթերի բացակայության պայմաններում անձինք դիմում են ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն՝ փաստաթղթերի կրկնօրինակները ստանալու նպատակով: Սակայն ստանում են մերժում այն հիմնավորմամբ, որ բացակայում են անհրաժեշտ փաստերը հաստատող փաստաթղթերը: ՀՀ նոտարական գրասենյակներում հրաժարվում են կատարել իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատումները, որի հիմքով՝ անձինք ստիպված դիմում են դատական պաշտպանության և իրավունքի իրացումը հնարավոր է ապահովել միայն դատարանի միջոցով:

Կարևոր է արձանագրել մեկ այլ կարևոր փաստ առ այն, որ թե՛ դատական և թե՛ արտադատական մարմիններին դիմելու համար բռնի տեղահանված անձը պետք է վճարի պետական տուրք, որը լրացուցիչ ֆինանսական բեռ է բռնի տեղահանված անձանց համար:

2023 թ. օգոստոսի 3-ի ՀՕ-265-Ն օրենքով ՀՀ նոտարիատի մասին օրենքի 81.1 հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ.

«Օրենքի 81.1-ին հոդվածում՝ 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Նոտարը հաստատում է իրավաբանական նշանակություն ունեցող հետևյալ փաստերը.

- 1) անձանց ազգակցական հարաբերությունները.
- 2) անձի՝ ուրիշի խնամքի տակ լինելը.
- 3) ծննդյան, որդեգրման (դստերագրման), ամուսնության, ամուսնալուծության և մահվան գրանցումը.
- 4) անձի՝ որոշակի ժամանակում և որոշակի հանգամանքներում մահը, եթե քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինները մերժում են մահվան գրանցումը.
- 5) ժառանգությունն ընդունելը և (կամ) ժառանգության բացման վայրը.
- 6) դժբախտ պատահարը.
- 7) իրավունք սահմանող փաստաթղթերի պատկանելությունը, բացառությամբ անձնագրի և զինվորական փաստաթղթերի.
- 8) սեփականության իրավունքով գույքի տիրապետումը.
- 9) անհաղթահարելի ուժի առկայությունը.
- 10) անձանց բանավոր հայտարարությունները:».

2) 4.1-ին մասի հինգերորդ, Նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ցուցմունքն արձանագրում է նոտարը, այն ստորագրում է վկան, և արձանագրությունը կցվում է նոտարական գործին: Ցուցմունքը կարող է նաև ձայնագրվել, որի դեպքում ձայնագրման կրիչը կցվում է նոտարական գործին:»:

Վերոնշյալ օրենսդրական կարգավորման Նպատակը եղել է ՀՀ Նոտարիատի մասին օրենքում չներառված իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման գործերը նոտարին վերապահելու արդյունքում, թեթևացնել դատարանների ծանրաբեռնվածությունը՝ հաշվի առնելով այն, որ նոտարներին նման լիազորություն տալու արդյունքում թվարկված իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման հարցով քաղաքացիները այլևս չեն դիմի դատարան:

Մինչդեռ, օրենսդրական ամրագրումը չի ծառայում իր նպատակին, մասնավորապես բռնի տեղահանված անձինք անհրաժեշտ փաստերի հաստատման համար ստիպված դիմում են դատարան, կրում դատական ծախսեր, անցնում են դատավարական որոշակի փուլեր, որից հետո միայն հնարավոր է լինում ունենալ իրավաբանական հաստատված փաստ և այս ամենը տևում է միջինում 4 ամիս :

Այս համատեքստում կարևոր է արձանագրել նաև որ բռնի տեղահանված անձինք ազատված չեն <Պետական տուրքի մասին> ՀՀ օրենքով սահմանված պետական տուրքի վճարումից: Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման դրույթաչափը, մեկ հայցապահանջի համար գանձվող պետական տուրքը կազմում է 20.000 ՀՀ դրամ: Պետական տուրքի վճարման մասով արտոնություն չսահմանելը լրացուցիչ ֆինանսական բեռ ու պարտավորություն է առանց այն էլ կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց համար:

Կազմակերպությունը դիմել է ՀՀ արդարադատության նախարարությանը առաջարկելով խնդրի լուծման նպատակով հանդես գալ օրենսդրական առաջարկով: Կազմակերպության կողմից ներկայացված գրությունը այս պահին քննարկվում է ՀՀ արդարադատության նախարարությունում:

ԲՐՆԻ ՏԵՂԱՆԿԱՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԹՎԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ


Կազմակերպությունը տեղեկատվության հարցումներ է ներկայացրել ՀՀ պետական մարմիններին, գնահատելու համար, թե ինչքանով է իրականացված տեղահանված անձանց սոցիալ-տնտեսական ապահովության և աշխատանքային իրավունքի պաշտպանությունն ըստ իրենց բնակության վայրի տեղաբաշխման:

Այսպիսով՝ 2023 թվականի հոկտեմբերի 4-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության մարզերում բնակվել է 55,661 Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձ: Հաջորդիվ, 2023 թվականի հոկտեմբերի 27-ի դրությամբ այդ

Թիվը աճել է՝ հասնելով 68,105-ի, ինչը վկայում է գրեթե երեք շաբաթվա ընթացքում շուրջ 12,444 հոգու մասին: 2024 թվականի փետրվարի 1-ի դրությամբ բռնի տեղահանվածների թիվը կազմել է 73,742, այսինքն՝ հոկտեմբերի 27-ից մինչև փետրվար ավելացել է ևս 5,637 անձով: Այնուհետև, 2025 թվականի մարտի 20-ի դրությամբ ՀՀ մարզերում բնակվող Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց թիվը կազմել է 63,638 ինչը նվազում է ավելի վաղ արձանագրված ցուցանիշի համեմատ:

Գծապատկեր 1.

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց տեղաբաշխումն ըստ մարզերի³



2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծած պատերազմից, ինչպես նաև 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 7402 անձ ստացել է ՀՀ քաղաքացիություն, նույն ժամանակահատվածում ՀՀ կառավարության կողմից հաստատված

³ Տեղեկատվությունը ներկայացված է 2025 թ. մարտի 20-ի դրությամբ

բնակարանային ապահովման ծրագրի ձեռքբերման և անհատական բնակելի տան կառուցման շրջանակում ստացված դիմումների քանակը եղել է 1581 է, որից՝

- Հաստատվել է 710 հավաստագիր,
- Մերժվել՝ 801 դիմում,
- Հաստատված հավաստագրերից իրացվել է 55 հավաստագիր,


Նույն որոշմամբ հիփոթեքային վարկի մարման աջակցության շրջանակներում ստացված դիմումների քանակը 222 է եղել, որից՝

- հաստատված հավաստագրերի քանակը 75 է,
- մերժված դիմումների քանակը՝ 147,
- իրացված հավաստագրերի քանակը՝ 19:

Ձեռքբերման և անհատական բնակելի տան կառուցման շրջանակում իրացված հավաստագրերի քանակը ըստ մարզերի կազմում է հետևյալ պատկերը.

Գծապատկեր 2.

Իրացված հավաստագրերի քանակն ըստ ՀՀ Երևան քաղաքի և մարզերի



ՀՀ կառավարության 2024 թվականի հունիսի 14-ի N 898-L որոշման համաձայն բնակարանային ապահովման ծրագրի դիմումները էլեկտրոնային տարբերակով ընդունվում են 2024 թվականի հունիսի 15-ից՝ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:

Ստացված տվյալների համաձայն՝ 2024 թվականի հունիսից մինչև 2025 թվականի մարտ ամիսը ընդհանուր առմամբ իրացվել է 64 շահառուի տրամադրված հավաստագիր, նշված պատկերը խիստ մտահոգիչ է, շահառու դարձած անձանց թվի ու իրացված հավաստագրերի հարաբերակցության մեջ:

Բնակարանային ապահովման պետական ծրագրերի արդյունավետությունն ուղղակիորեն պայմանավորված է ոչ միայն ծրագրի ֆինանսավորմամբ և իրավական ձևաչափերի պահպանմամբ, այլ նաև շահառուների կողմից հավաստագրերի իրացման իրական հնարավորությամբ: Հիմնական խնդիրն է բացահայտելու այն հիմնական պատճառները, որոնք հանգեցրել են հավաստագրերի իրացման էապես ցածր մակարդակին, ինչպես նաև առաջարկել լուծումներ ծրագրի արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Այսպես, հաստատված 710 հավաստագրերից իրացվել է միայն 55-ը, ինչը կազմում է հաստատված հավաստագրերի 7.75%-ը: Բնակարանային ապահովման ծրագրի իրական շահառուների ավելի քան 92%-ը ծրագրի իրականացման 9 ամիսների ընթացքում չի կարողացել իրացնել հաստատված հավաստագիրը:

Շահառուների մի մասը գերադասում է բնակվել մայրաքաղաքում կամ խոշոր համայնքներում, մինչդեռ հավաստագիրը և դրանով նախատեսված ֆինանսական ապահովման չափը հաճախ բավարար է միայն մայրաքաղաքից դուրս շրջաններում կամ գյուղական բնակավայրերում բնակարան ձեռք բերելու համար: Հաստատված հավաստագրերից ամենաշատն իրացվել է Երևան քաղաքում իսկ մարզերից Կոտայքում, Արմավիրում և Արարատում, որը պայմանավորված է այդ մարզերի մայրաքաղաքին մոտ լինելու հանգամանքով:

Մյուս պատճառը պայմանավորված է ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու իրավական գործընթացի բարդություններով, մասնավորապես անհրաժեշտ

փաստաթղթերի ձեռք բերման հետ կապված խնդիրներով: Տեղին է նշել, որ ըստ ՀՀ ներքին գործերի նախարարության հայտնած տեղեկատվության, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ ՀՀ քաղաքացիություն է ստացել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընդամենը 7402 անձ:

Այս փուլում Կազմակերպությունը գտնում է, որ անհրաժեշտ է գործնական քայլեր իրականացնել, որոնք կարող են նպաստել շահառուների կողմից հավաստագրերի գումարին համարժեք իրենց նախընտրած բնակավայրերում բնակություն հաստատելու համար:

Առաջարկվող գործողություններն են՝

- աշխատանքային շուկայի զարգացում համայնքներում խրախուսելով տեղական տնտեսության զարգացմանը և ներդրումները, մասնավորապես փոքր և միջին բիզնես գաղափարների ներդրում և ֆինանսավորում,
- համայնքներում գյուղատնտեսության զարգացմանը (կենդանիների տրամադրում, հողագործության համար արտոնյալ պայմաններով գյուղատնտեսական նշանակության հողերի հատկացում, սերմերի և սերմանյութերի տրամադրում), Էկոլոգիական ջերմոցների կառուցման հնարավորություն և այլն:
- աջակցություն արհեստով զբաղվող անձանց՝ անհրաժեշտ գործիքների կամ ֆինանսական միջոցների տրամադրում իրենց գործունեությունը սկսելու կամ զարգացնելու նպատակով:
- երեխաների համար գյուղական բնակավայրերում ենթակառուցվածքների ինչպիսիք են մարզական, արհեստագործական, կրթական և մշակութային կենտրոնների ստեղծում,
- տեղեկատվական աջակցություն շահառուներին՝ օգնելով նրանց կողմնորոշվելու համար, թե որտեղ և ինչպես կարելի է առավել արդյունավետ կերպով օգտագործել իրենց տրամադրած հավաստագիրը:

- ուղեցույցների մշակում և խորհրդատվական ցանցի ձևավորում, որը կաջակցի շահառուներին բնակության վայրի ընտրության և հավաստագրի կիրառման որոշումների կայացման հարցում:

Կազմակերպությունը ՀՀ պետական եկամուտների կոմիտեից տեղեկատվության հարցմամբ փորձել է պարզել ԼՂ-ից տեղահանված անձանց զբաղվածությունը 2023 թվականի բռնի տեղահանումից հետո: Ցավոք աշխատող անձանց տվյալների վերաբերյալ պետական եկամուտների կոմիտեն հաշվառումն իրականացնում է միայն ՀՀ ամբողջ տարածքով, բայց ոչ ըստ մարզերի:

Նման տեղեկատվության հիման վրա կարելի է տեսնել մարզերում բռնի տեղահանված անձանց զբաղվածության և բնակարան ձեռք բերելու հավաստագրերի չիրացման միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

Գծապատկեր 3. ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց սեռատարիքային զբաղվածությունն ըստ տարբեր ժամանակահատվածների ՀՀ ամբողջ տարածքում

Ժամանակահատված	Արական							Իգական						
	Մինչև 17 տ	18-25 տ	26-35 տ	36-45 տ	46-55 տ	56-62 տ	63 տ և բարձր	Մինչև 17 տ	18-25 տ	26-35 տ	36-45 տ	46-55 տ	56-62 տ	63 տ և բարձր
2023թ. 9-12 ամիսներ	9	936	1 316	1 339	838	418	327	2	710	1 058	1 438	990	393	230
2024թ. 1-3 ամիսներ	7	1 398	2 017	2 036	1 411	629	554	4	993	1 567	2 175	1 479	589	329
2024թ. 4-6 ամիսներ	36	1 737	2 412	2 512	1 770	834	802	13	1 208	1 833	2 588	1 758	721	436
2024թ. 7-9 ամիսներ	71	2 084	2 726	2 866	2 017	1 000	1 005	21	1 521	2 007	2 970	2 035	844	535
2024թ. 10-12 ամիսներ	78	2 224	2 821	3 031	2 112	1 045	1 070	31	1 615	2 037	3 093	2 140	910	574
2025թ. 1-2 ամիսներ	76	2 161	2 720	2 924	2 068	1 049	1 030	32	1 546	1 996	3 012	2 110	890	562

Ներկայացված տվյալներն ընդգրկում են արական և իգական սեռի ներկայացուցիչներին, յուրաքանչյուրում 7 տարիքային խմբով: Տեսանելի է աշխատանք ունեցողների թվի կտրուկ աճ 2023-ից 2024-ի ընթացքում, հատկապես

մինչև 2024-ի երրորդ եռամսյակը, այնուհետև ցուցանիշները կայունանում են: Առավել մեծ թվով աշխատանք ունեցողները 26–35 և 36–45 տարեկան անձինք են:

Ներկայացված տվյալները վկայում են, որ աշխատաշուկայում առավել մրցունակ են միջին տարիքի անձինք: Տղամարդիկ և կանայք գրեթե հավասարապես են ներկայացված, սակայն որոշ փուլերում իգական սեռի թվաքանակը մի փոքր գերազանցում է:

Օրինակ՝ 2024թ. հոկտեմբեր–դեկտեմբերին աշխատանք ունեցել են արական սեռի 11,381 անձ, իգական՝ 12,400 անձ: 63 և բարձր տարիքային խումբը ամենաքիչ ներկայացվածն է 2025թ. հունվար–փետրվար ժամանակահատվածում. արական սեռի 1,030 անձ, իգական՝ 562 անձ:

Աշխատանք ունեցողների նշանակալի աճ է արձանագրվել նաև մինչև 17 տարեկանների շրջանում: 2024 թվականի ապրիլից տարիքային այս խմբում գրանցված աշխատողների թիվը սկսել է կայուն աճել, ինչը բնութագրական է նաև մյուս տարիքային խմբերի համար:

ՀԶԱՎ գրասենյակը և Հասարակական հետազոտությունների առաջատար խումբը Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ իրականացվող “Արժանապատիվ աշխատանք հիմա” ծրագրի շրջանակներում իրականացրեց սոցիոգիական [հետազոտություն](#)⁴, որը նվիրված էր Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց աշխատանքային իրավունքների վիճակին: Այսպես.

- Բռնի տեղահանված եւ հարցումներին մասնակցած արցախցիների 42.9 տոկոսը նշել են, որ աշխատանք ունեն Հայաստանում: Հարցվածների 68.5 տոկոսն նշել է, որ Հայաստանում ավելի ցածր են վարձատրվում, քան Արցախում:
- Արցախցիների 79.4 տոկոսը Հայաստանում վարձակալությամբ են բնակվում

⁴ [Բռնի տեղահանված արցախցիների զբաղվածությունն ու աշխատանքային իրավունքների իրացումը Հայաստանում - Helsinki Citizens' Assembly-Vanadzor \(hcav.am\)](#)

- Հարցված արցախցիների մեծամասնությունը նշել են, որ իրենց ընտանիքի միջին ամսեկան եկամուտը 150-350 հազար դրամ է կազմում:
- Անդրադառնալով հարցին, թե ինչպիսի՞ն կլինի Հայաստանի վիճակը, հարցված արցախցիների 32.9 տոկոսն ասել են, որ վիճակը կվատանա, 19.3 տոկոսն ասել են, որ կտրուկ կվատանա, իսկ 15.5 տոկոսը նշել են, որ կտրուկ կլավանա: Հարցված արցախցիների 52.8 տոկոսը նշել են, որ ցանկանում են աշխատել ու ապրել Հայաստանում:
- Աշխատանքի հետ կապված ապագայի ի՞նչ պլաններ ունեք, հարցին հարցված արցախցիների 6.8 տոկոսը պատասխանել է, որ պատրաստվում են մեկնել Ռուսաստանի Դաշնություն, 7.6 տոկոսը նշել են, որ մտադիր են մեկնել այլ երկրներ, 12.8 տոկոսը դժվարացել է պատասխանել հարցին, 19.5 տոկոսը ցանկություն են հայտնել վերադառնալ Արցախ, իսկ 52.8 տոկոսը նշել են, որ պատրաստվում են աշխատել ու ապրել Հայաստանում:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իրականացրած համալիր և թեմատիկ հարկային ստուգումների ընթացքում հայտնաբերվել է ԼՂ-ից բռնի տեղահանված չգրանցված 16 վարձու աշխատող: Այս փաստը ընդգծում է հարկային վերահսկողության և սոցիալական պաշտպանության մեխանիզմների շարունակական անհրաժեշտության մասին, հատկապես խոցելի խմբերի շրջանում:

Այս համատեքստում առաջարկում ենք՝

- մշակել և իրականացնել զբաղվածության ռազմավարություն տեղահանված անձանց շրջանում, որն իր մեջ կներառի զբաղվածության մակարդակն ըստ տարիքային խմբերի:
- իրականացնել հանրային իրազեկում աշխատանքային հարաբերությունների կարգավորման վերաբերյալ:


Կազմակերպությունը տեղեկատվության հարցում է ուղարկել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն նպատակ ունեւորվ հասկանալ ԼՂ-ից տեղահանված այն անձանց թվային տվյալները, ովքեր չեն դարձել ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N 1763-L (40+10) որոշման շահառու՝ օպերատիվ շտաբի կողմից տվյալները փոխանցված չլինելու հիմքով: Հարցմանն ի պատասխան ստացված տվյալները արտացոլված են ստորև ներկայացված գծապատկերում:

Միջոցառման շահառու է հանդիսանում՝ 97.664 անձ

Հարթակում չկրկնվող մերժումների թիվը՝ 30.023

Գծապատկեր 4.

ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N 1763-L որոշման շրջանակներում աջակցություն ստացած շահառուների և մերժված դիմումների վերաբերյալ



«Տվյալներն առկա չեն ցուցակներում» մերժումները համակարգային լուծում պահանջող խնդիրներ են, որոնք ցույց են տալիս, որ աջակցություն տրամադրելու նպատակով որոշումները երբեմն հիմնվում են ոչ ամբողջական տվյալների վրա:

Մասնավորապես, օպերատիվ շտաբի կողմից տվյալները փոխանցված չլինելը չի կարող մերժման հիմք հանդիսանալ, քանի որ օպերատիվ շտաբի կողմից տվյալներ փոխանցված չլինելու դեպքում անձը զրկվում է որևէ կերպ սոցիալական աջակցություն ստանալու իր իրավունքն իրացնելու հնարավորությունից, քանի որ այդ տվյալները փոխանցող կառույցը փաստացի դադարել է գոյություն ունենալ:

Կարևոր է արձանագրել, որ Արցախի օպերատիվ շտաբը ստեղծվել է 2020 թվականին՝ 44-օրյա պատերազմից հետո, և դադարել է գործել 2023 թվականի հոկտեմբեր ամսից⁵: Մինչդեռ ՀՀ կառավարությունը ԼՂ-ից բռնի տեղահանված ներկայումս տրամադրվող աջակցություններում շարունակում է հիմք ընդունել գոյություն չունեցող կառույցի տվյալները, որոնք անգամ տեխնիկական խնդիրների դեպքում շտկման ենթակա չեն:

⁵ <https://arm.sputniknews.ru/20231031/erevanum-arcakhi-karavarutjan-operativ-shtaby-pakvel-e-68039441.html>

ՀՀ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅՈՒՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՈՆԻ ՏԵՂԱՅԱՆՎԱԾ ԱՌԱՆՁԻՆ ԽՄԲԵՐԻ
ԱՆՁԱՆՑ ԿԵՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 1763-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ՀՀ իրավական ակտերի նախագծերի միասնական հարթակում 2024 թվականի հոկտեմբերի 30-ին հրապարակվել է օրենսդրական նախագիծ⁶, որով նախատեսվել է ՀՀ կառավարության 12.10.2023թ.-ի N 1763-Լ որոշմամբ (այսուհետ՝ որոշում) սահմանված սոցիալական աջակցության տրամադրման ժամկետի երկարացում ևս 3 ամսով՝ 2025 թվականի հունվար-մարտ ամիսների համար՝ ամսական 50 հազար դրամի չափով: Նախագծով նախատեսվում է տրամադրվող սոցիալական աջակցության ավարտից հետո՝ 2025 թվականի ապրիլ ամսից սոցիալական աջակցություն տրամադրել բռնի տեղահանված առանձին խմբերի անձանց՝ փաստացի Հայաստանի Հանրապետությունում բնակվող Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից հաշվառված՝ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող կամ ֆունկցիոնալության սահմանափակման խորը կամ ծանր աստիճան ունեցող անձանց, 63 և ավելի տարեկան անձանց, կերակրողին կորցնելու դեպքում՝ նպաստ ստացող անձանց (այսուհետ՝ կերակրողին կորցրած անձ) և մինչև 18 տարեկան երեխաներին:

Սոցիալական աջակցության ամսական չափը յուրաքանչյուր շահառուի համար նախատեսվում է.

⁶ <https://www.e-draft.am/projects/7852/digest>

1) 2025 թվականի ապրիլ ամսվանից մինչև հունիս ամիսը ներառյալ՝ 40000 դրամ.

1) 2025 թվականի հուլիս ամսվանից մինչև դեկտեմբեր ամիսը ներառյալ՝ 30000 դրամ:

Ներկայացված նախագծի վերաբերյալ Կազմակերպությունը ներկայացրել է առաջարկությունը, որպեսզի նախ և առաջ շահառու դիտարկվեն անձանց, ովքեր չեն օգտվել սոցիալական աջակցության ծրագրից այն հիմքով, որ ՀՀ տարածքում ունեն սեփականություն, որը օբյեկտիվորեն պիտանի չէ բնակության համար: Բռնի տեղահանված անձանց մի ստվար զանգված գրկվել է սոցիալական աջակցությունից, քանի որ ՀՀ-ում ունի բնակության համար ոչ պիտանի սեփականություն և մինչ օրս այս անհամաչափ սահմանափակումը չի վերացվել: Առաջարկել ենք նաև ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի այն անձիք, ում տվյալները օպերատիվ շտաբի կողմից տրամադրված չեն եղել, հանդիսանան աջակցության շահառու՝, հիմք ընդունելով վերջիններիս անձնագրային տվյալները կամ այլ փաստ, որ իրենք բռնի տեղահանված են Լեռնային Ղարաբաղից: Բացի այդ, նախագծով չի հիմնավորվում այն դրույթը, թե ինչ պատճառների արդյունքում է որոշվել սոցիալական աջակցության ժամկետը բոլոր շահառուների համար սահմանել մինչև 2025 թվականի մարտ ամիսը: Այս համատեքստում նախ պետք է դիտարկել հետևյալը, որ աջակցությունը նպատակ ունի բռնի տեղահանված անձանց ապահովել կեցության և այլ ծախսերով: Հետևաբար ապագայի ինչ ակնկալիքով է նախագիծ մշակող մարմինը սահմանել, որ մինչև 2025 թվականի մարտ ամիսն են բռնի տեղահանված արցախցիներն ունենալու կեցության հետ կապված հարցեր, և դրանից հետո չեն ունենալու: Պետությունը Փախստականների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի հիման վրա Հայաստանի Հանրապետությունում տեղահանված անձանց նկատմամբ կիրառել է ժամանակավոր պաշտպանություն, որը նպատակ ունի ապահովել վերջիններիս կեցությամբ: Մինչդեռ, տվյալ դեպքում, նախագիծը պետք է նախ և առաջ հաշվի առնի թե քանի արցախցի է մինչ օրս դարձել բնակարանային ապահովման շահառու, և ի՞նչ միտումով է հաստատվում այն փաստը, որ մինչև

վերջնաժամկետի ավարտը անձը կկարողանա ձեռք բերել կացարան ՀՀ տարածքում, և չի ունենա կեցության համար նախատեսված սոցիալական աջակցության անհրաժեշտություն: Հետևաբար առաջարկում ենք, սոցիալական աջակցության ժամկետը բոլոր տեղահանված անձանց համար սահմանել մինչև՝ 2025 թվականի դեկտեմբեր ամիսը, սակայն դրա դադարման հիմքը սահմանել անձանց կամ վերջիններիս ընտանիքի անդամների բնակարանային ապահովման շրջանակներում շահառու հանդիսանալը և միաժամանակ դրա արդյունքում ՀՀ տարածքում գույք ձեռք բերելու փաստը:

Ներկայացված առաջարկության վերաբերյալ մշակող մարմինը հայտնել է հետևյալ եզրակացությունը՝ «Առաջարկն ընդունվել է ի գիտություն: Սոցիալական աջակցության ծրագրերի նպատակը կարիքներին արձագանքելն է, ուստի ընտանիքի եկամուտների գնահատում չենթադրող աջակցությունները չեն կարող լինել անժամկետ: 50,000 դրամ աջակցության չափը 3 ամսով երկարաձգելը պայմանավորված է ձմռան ամիսներով՝ միաժամանակ սոցիալական աջակցության չափի և շահառուների մասին կանխատեսելի տեղեկատվությունը թույլ կտա ընտանիքներին պլանավորել իրենց սոցիալ-տնտեսական ինտեգրումը: Միաժամանակ նախագծով նախատեսված է, որ աջակցությունը 2025 թ. ընթացքում շահառուներին հասանելի կլինի՝ տարվա ընթացքում ՀՀ կառավարության կողմից 2024 թվականի մայիսի 16-ի N 710-L որոշման շրջանակում բնակելի տարածք ձեռք բերելուց անկախ: Ինչ վերաբերում է գույքի կամ այլ սեփականության վերաբերյալ տվյալների անճշտություններին, ապա հնարավոր ճշգրտումներից հետո շահառու ճանաչվելու դեպքում աջակցությունները հետահայաց վճարվում են, իսկ ճշգրտման անհնարինության դեպքում պետական մարմինը պարտավոր է առաջնորդվել իրավական առումով ստուգելի և չափելի տվյալներով: Ուստի, միջոցառման շահառուների շրջանակը որոշելու համար հիմք են ընդունվում առկա, հասանելի և ստուգելի շտեմարանների տվյալները»:

Արդյունքում, արձանագրում ենք, որ եզրակացությամբ ներկայացված ստուգելի և չափելի տվյալների բացակայությունն ակնհայտ է, քանի որ բռնի տեղահանումից հետո, երբ օպերատիվ շտաբը դադարեց գոյություն ունենալ, դրանից հետո չհաշվառված անձինք փաստացի մինչ օրս չեն ճանաչվել սոցիալական աջակցության շահառու, և որևէ այլ հասանելի և ստուգելի շտեմարանի հղում չի կատարվել, առ այն, որ տեղահանված անձինք ևս կարողանան դառնալ աջակցության շահառու: Իսկ սոցիալական աջակցությունը շարունակելը կամ դադարեցնելը պետք է դիտարկվի տեղահանված անձանց սոցիալական ինտեգրման և աշխատաշուկայում վարձու աշխատողների առկայության թվի դրական դինամիկայի վիճակագրական տվյալների հիմքով:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻՑ ԲՈՆԻ ՏԵՂԱՅԱՆՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՀՐԱՏԱՊ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ԵՎ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի N 1833-Լ ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

2025 թվականի մարտի 6-ին հրապարակվեց նախագիծ, որով նախատեսվում է հրատապ սոցիալական աջակցություն տրամադրել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված սոցիալապես անապահով ընտանիքներին, որոնց առնվազն մեկ անդամի տվյալներն առկա են Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի N 1675-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում միանվագ դրամական սոցիալական աջակցության շահառուների կամ Օպերատիվ շտաբի տրամադրած՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գտնվող Լեռնային Ղարաբաղի բնակիչ հանդիսացող անձանց ցուցակներում կամ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից և 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Ադրբեյջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից հաշվառված բռնի տեղահանվածների տվյալների շտեմարանում, բացառությամբ՝

1) պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող տարածքներում ժամանակավոր բնակվող ընտանիքներին.

2) պետական աջակցությամբ հյուրանոցներում կամ հյուրատներում ժամանակավոր բնակվող ընտանիքներին.

3) ընտանիքների, որոնց անդամներից մեկը Հայաստանի Հանրապետությունում ունի սեփականության կամ ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով (50 տոկոս և ավելի մասնաբաժնով) պատկանող բնակության համար նախատեսված բնակելի անշարժ գույք:

Միջոցառման շրջանակներում սոցիալապես անապահով ընտանիք է համարվում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում

հաշվառված անապահովության «14.00» միավորից բարձր անապահովության միավոր ունեցող կամ «Պետական նպաստների մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված կարգով ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափն անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 160 տոկոսի արժեքից ցածր եկամուտ ունեցող և ընտանիքի անապահովության գնահատման կարգով սոցիալապես անապահով ճանաչված ընտանիքները:

Քննարկվող նախագծի վերաբերյալ կազմակերպության առաջարկությունները

Իրավական ակտի նախագծի համաձայն «... Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված սոցիալապես անապահով ընտանիքներին կյանքի դժվարին իրավիճակը հաղթահարելու համար լրացուցիչ հրատապ սոցիալական աջակցություն տրամադրելն է»: Միաժամանակ «Իրավական ակտի կիրառման դեպքում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 3000 սոցիալապես անապահով ընտանիքներ մինչև 2025 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ կստանան ամենամսյա դրամական աջակցություն՝ դրանով իսկ կանխարգելելով նրանց սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացումը»: Որպես հիմնական խնդիր ձևակերպված է.

«Սոցիալական աջակցության շարունակականության ապահովման անհրաժեշտություն է առաջացել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված սոցիալապես անապահով ընտանիքների դեպքում՝ կանխելու վերջիններիս սոցիալ-տնտեսական վիճակի հնարավոր վատթարացումը և կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու ռիսկը»:

Այս խնդրի լուծման նպատակով իրականացվելիք միջոցառումներն են. «Նախագծով նախատեսվում է հրատապ սոցիալական աջակցություն տրամադրել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված սոցիալապես անապահով ընտանիքներին, բացառությամբ՝ 1) պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող տարածքներում ժամանակավոր բնակվող

ընտանիքներին. 2) պետական աջակցությամբ հյուրանոցներում կամ հյուրատներում ժամանակավոր բնակվող ընտանիքներին. 3) ընտանիքների, որոնց անդամներից մեկը Հայաստանի Հանրապետությունում ունի սեփականության կամ ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով (50 տոկոս և ավելի մասնաբաժնով) պատկանող բնակության համար նախատեսված բնակելի անշարժ գույք»:

Այսինքն, մեր համոզմամբ իրավական ակտի փոփոխության նախագծի նպատակը և իրավական ակտի կիրառման ընթացքում առաջացած առկա խնդիրները առաջարկվող նախագծով չեն լուծվելու, ավելին դրանք հակասում են միմյանց:

Նախագծով բարձրացվել են խնդիրներ, որոնք համապատասխան ուսումնասիրության և վիճակագրական տվյալների վերլուծության արդյունք չեն:

Նախագծով սահմանվել է անապահով ընտանիքների թիվը և տրվել նրանց անապահով լինելու մասին գնահատական՝ չունենալով գնահատման հստակ մեխանիզմներ և վիճակագրական տվյալներ անապահով ընտանիքների քանակի և վիճակի վերաբերյալ:

Կազմակերպությունը իրավական խորհրդատվության ընթացքում արձանագրել է, որ սոցիալապես անապահով որոշ ընտանիքներ տարբեր պատճառներով դուրս են մնացել սոցիալական աջակցության ցուցակից և չեն հանդիսանում շահառու:

Անհրաժեշտ է նաև արձանագրել, որ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող տարածքներում ժամանակավոր բնակվող ընտանիքների, ինչպես նաև պետական աջակցությամբ հյուրանոցներում կամ հյուրատներում ժամանակավոր բնակվում են ընտանիքները, ովքեր չունեն որևէ այլ հնարավորություն բնակվելու վարձով, սակայն իրենք ծրագրերի շահառու չեն հանդիսանում և իրենց վերաբերյալ տվյալները ներառված չեն անապահով ընտանիքների ցուցակում:

Այս ընտանիքները ևս ունեն սոցիալ-տնտեսական կարիքներ, սակայն չարունակում են զրկված լինել պետական աջակցությունից և այդ կարիքները

բավարարելու հնարավորությունից: Նման իրավիճակում անհրաժեշտ ենք համարում հետևյալ փոփոխությունների կատարումը.

1. Սահմանել ընտանիքների սոցիալ-տնտեսական կարիքները գնահատող հստակ և թափանցիկ մեխանիզմ:

2. Վերանայել պետական աջակցության ծրագրերին մասնակցության չափանիշները՝ ապահովելով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների լիարժեք ներգրավվածությունը՝ բացառելու համար սոցիալապես անապահով ընտանիքների ծրագրից դուրս մնալու հավանականությունը:

3. Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող տարածքներում ժամանակավոր բնակվող ընտանիքներին և պետական աջակցությամբ հյուրանոցներում կամ հյուրատներում ժամանակավոր բնակվող ընտանիքներին ևս ներառել ծրագրի շահառուների ցանկում:

4. Բացառել օպերատիվ շտաբի կողմից փոխանցված տվյալների հիման վրա մերժումները կամ ձեռնարկել այնպիսի միջոցառումների իրականացում, որը հնարավորություն կտա օպերատիվ շտաբում չընդգրկված անձանց տվյալների ներառումը:

5. Անապահովության գնահատման համակարգը սահմանվում է 14 միավոր, որը հիմնված չէ հստակ գնահատման մեխանիզմների վրա:

6. Նախագծով նախատեսված 30.00 շահառուի սահմանը լրացած լինելու պայմաններում անապահովության միավոր ունեցող անձանց աջակցություններից զրկվելը չի կարող համարվել հիմնավոր և նրանց աջակցությունը չպետք է մերժվի այդ հիմնավորմամբ:

7. Նախագծով սահմանվում է, որ շահառու չի կարող հանդիսանալ լինել Հայաստանի Հանրապետությունում սեփականության կամ ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով (50 տոկոս և ավելի մասնաբաժնով) պատկանող բնակության համար նախատեսված բնակելի անշարժ գույք ունեցող անձին, մինչդեռ արձանագրել ենք դեպքեր, երբ ՀՀ Կադաստրի կոմիտեն տրամադրում է տվյալներ նաև բնակության համար ոչ

պիտանի գույքի վերաբերյալ, որի հիմքով մերժվում է անձանց աջակցության տրամադրումը:

Կազմակերպության կողմից ներկայացված այս առաջարկները չեն ընդունվել հետևյալ հիմնավորումներով.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արդեն իսկ սահմանված են սոցիալ-տնտեսական կարիքների գնահատման մեխանիզմները, միաժամանակ ոլորտային օրենսդրությունը գտնվում է վերանայման և բարեփոխումների գործընթացում. 2024 թ. նոյեմբերի 14-ին ուժի մեջ է մտել ՀՀ սոցիալական աջակցության մասին օրենքի նոր խմբագրված տարբերակը, որի հիմքով և ՀՀ վարչապետի 47-Ա որոշմամբ մշակվում կամ վերանայվում են 47 ենթաօրենսդրական ակտեր:

Հարկ է ընդգծել, որ հանրային քննարկմանը ներկայացված նախագծով առաջարկվում է դեռևս 2024 թ.-ին սահմանված բոլոր միջոցառումներին զուգահեռ՝ լրացուցիչ միջոցառում LՂ բռնի տեղահանված և որոշակի անապահովության շեմ ունեցող ընտանիքների համար: Համաձայն նախագծի, ի լրումն մյուս բոլոր գործող աջակցության միջոցառումների (դրամական, բնակարանային ապահովման և զբաղվածության)՝ սոցիալապես անապահով LՂ բռնի տեղահանված ընտանիքները կարող են լրացուցիչ աջակցություն ստանալ ընտանիքի հաշվով 40,000 դրամ՝ գումարած 10,000-ական դրամ սկսած 2-րդ անդամից ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար: Անապահովության գնահատման կարգը և այդ համակարգում ընտանիքի կազմի որոշումը իրականացվում է ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն և 2025 թվականի հունվարի 9-ի N 27-Ն որոշումներով սահմանված դրույթներով: Այն ընտանիքները, որոնք հաշվառված կլինեն ընտանիքների անապահովության գնահատման համակարգում և կբավարարեն նախագծով ներկայացված չափանիշներին, կարող են դառնալ այս լրացուցիչ միջոցառման շահառու: Հասանելի տվյալների վերլուծության արդյունքում գնահատվել է, որ նախագծով առաջարկված անապահովության շեմով ընտանիքների թիվը չի գերազանցի 3000-ը: Նախագծի հաստատման դեպքում կարիք կլինի դիմել Միասնական սոցիալական

Ծառայության տարածքային կենտրոններ, իսկ Սյունիքի և Կոտայքի մարզում կարող են նաև դիմել առցանց՝ e-social.am կայքի միջոցով: Հատկանշական է, որ սոցիալական աջակցության ծրագրերի նպատակը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքներին ժամանակավոր աջակցություն տրամադրելն է՝ հնարավորություն տալու, որպեսզի այդ ընթացքում ընտանիքները դառնան սոցիալ-տնտեսապես ինքնուրույն և ինքնաբավ: Նախագծի իմաստով սահմանվում են, թե ովքեր են հանդիսանում շահառու, ինչպես մյուս սոցիալական աջակցությունների միջոցառումների, այնպես էլ առաջարկվող նախագծով, պետական մարմինը պարտավոր է առաջնորդվել՝ չափելի, ստուգելի և հասանելի տվյալներով: ԼՂ բռնի տեղահանվածների համար դրամական սոցիալական աջակցության միջոցառումների հիմնական նպատակն է լրացուցիչ աջակցությամբ նպաստել կեցության խնդիրների լուծմանը: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող տարածքներում, պետական աջակցությամբ հյուրանոցներում կամ հյուրատներում բնակվող անձանց դեպքում լրացուցիչ աջակցությունները չեն նախատեսվում, քանի որ վերջիններս արդեն գտնվում են հանրային հոգացության ներքո: Միաժամանակ այդ ընտանիքները ամբողջովին ինտեգրված են Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգում և, կախված իրենց կարգավիճակից, ստանում են կենսաթոշակներ և նպաստներ, ինչպես նաև կարող են դիմել անապահովության գնահատման միջոցով տրամադրվող նպաստներին և մյուս ծառայություններին:

Սույն նախագծի շրջանակում գնահատման մեխանիզմները նկարագրելը նպատակահարմար չէ, քանի որ անապահովության գնահատման կարգը և այդ համակարգում անապահովության որոշման մեխանիզմը արդեն իսկ սահմանված է օրենսդրությամբ և իրականացվում է ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն և 2025 թվականի հունվարի 9-ի N 27-Ն որոշումներով սահմանված դրույթներով: Հասանելի տվյալների վերլուծության արդյունքում գնահատվել է, որ նախագծով առաջարկված անապահովության շեմով ընտանիքների թիվը չի գերազանցի 3000-ը: Ինչպես վերևում նույն դիտարկմանն արդեն արձագանքել ենք, ԼՂ բռնի տեղահանվածների համար դրամական

սոցիալական աջակցության միջոցառումների հիմնական նպատակն է լրացուցիչ աջակցությամբ նպաստել կեցության խնդիրների լուծմանը: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող տարածքներում, պետական աջակցությամբ հյուրանոցներում կամ հյուրատներում բնակվող անձանց դեպքում լրացուցիչ աջակցությունները չեն նախատեսվում, քանի որ վերջիններս արդեն գտնվում են հանրային հոգացության ներքո: Միաժամանակ այդ ընտանիքները ամբողջովին ինտեգրված են Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգում և, կախված իրենց կարգավիճակից, ստանում են կենսաթոշակներ և նպաստներ, ինչպես նաև կարող են դիմել անապահովության գնահատման միջոցով տրամադրվող նպաստներին և մյուս ծառայություններին:

ՍՈՍԿՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԵԿՈՅՅՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1) ՀՀ քաղաքացիությունն ստանալու իրավական գործընթացի վերաբերյալ

ՀՀ քաղաքացիությունն ստանալու իրավական գործընթացում պահպանել ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված և վարչարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքով սահմանված սկզբունքները, ապահովվելով ավելի արագ և բարենպաստ վարչարարությամբ քաղաքացիների քաղաքացիության շնորհման գործընթաց:

Մինևույն՝ ժամանակ առաջարկում ենք 070 ծածկագրով անձնագիր ունեցող ԼՂ-ից տեղահանված անձանց ՀՀ քաղաքացիության շնորհման իրավական գործընթացի դեպքում սահմանել հատուկ արագացված ընթացակարգ:

2) Նոտարների կողմից իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ

ՀՀ արդարադատության նախարարությանը՝ իր լիազորությունների շրջանակներում իրականացնել համապատասխան վերահսկողություն ՀՀ նոտարական գրասենյակների նկատմամբ, որպեսզի ՀՀ նոտարիատի մասին օրենքով իրենց վերապահված լիազորությունների, իրավունքների և պարտականությունների շրջանակներում հաստատեն իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր, պահպանելով իրավական որոշակիությունը, և օրինականության սկզբունքը:

3) Պետական տուրքի արտոնության մասին

ՀՀ արդարադատության նախարարությանը՝ ՀՀ պետական տուրքի մասին օրենքում լրացում կատարելու օրենսդրական նախագծով հանդես

գալ, և Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման դիմումների ներկայացման դեպքում սահմանել պետական տուրքից ազատում արտոնությունը:

4) ՀՀ կառավարության թիվ 898-Լ որոշման կիրառման կարգի վերանայման վերաբերյալ

ՀՀ կառավարության՝ 2024 թվականի հունիսի 14-ի թիվ 898-Լ որոշմամբ աջակցության շահառու դիտարկելու համար սահմանված բնակելի գույք ունենալու փաստի վերաբերյալ իրականացնել անհատական ուսումնասիրություն, հիմք ընդունելով վերոնշյալ խնդիրները, կամ սահմանել նման պայմաններում գույքի բարեկարգման առանձին դրույթ, որը Կազմակերպության դիտարկմամբ ավելի իրատեսական է ներկայումս առաջացած մարտահրավերների պայմաններում:

Այս խնդրի շրջանակներում առաջարկում ենք նաև ՀՀ քաղաքացիությունն ստանալու համար որոշիչ պայման չնախատեսել ՀՀ քաղաքացիությունն ստանալու փաստը, այլ բռնի տեղահանված ընտանիքներին տրամադրել հնարավորություն ՀՀ քաղաքացիությունն ստանալու հարցում:

Միևնույն ժամանակ առաջարկում ենք, որ եթե Հայաստանի Հանրապետության կառավարության մտահոգությունը վերաբերում է Արցախից տեղահանված անձանց երկարաժամկետ բնակությանը Հայաստանում, ապա նպատակահարմար կլինի դիտարկել այնպիսի կարգավորում, որի համաձայն՝ ՀՀ քաղաքացիությունն ստանալու ցանկություն չունեցող անձանց տրամադրվի բնակարան՝ օգտագործման իրավունքով՝ առանց սեփականության իրավունքի փոխանցման:

Օպերատիվ շտաբի շտերմարաններում չներառված անձանց վերաբերյալ

Օպերատիվ շտաբի գործունեության կամ գոյության դադարման պայմաններում ստեղծել նմանատիպ մարմին, կամ կառույց ում միջոցով այն անձինք ովքեր ժամանակին չեն ընդգրկվել օպերատիվ շտաբի ցուցակներում կամ ում տվյալները փաստացի բացակայել է, որպես բռնի տեղահանված հնարավորություն ունենան ճանաչվել աջակցության շահառու: Նման մեխանիզմի ներդրումը կարևոր է՝ բռնի տեղահանված անձանց սոցիալական և իրավական պաշտպանության շարունակականությունը և հավասար հասանելիությունը երաշխավորելու համար:

5) ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց կեցության ծախսերի փոխհատուցման վերաբերյալ օրենսդրական կարգավորման վերաբերյալ

Մշակել և ներկայացնել օրենսդրական նախագիծ, որով կերաշխավորվի Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված այն ընտանիքների իրավունքները, ովքեր դեռևս չեն ճանաչվել բնակարանային ապահովման աջակցության շահառու, որը իրավական հնարավորություն կտա ընտանիքներին օգտվելու ժամանակավոր կեցության ծախսերի փոխհատուցման կամ ֆինանսավորման աղբյուրներից՝ մինչև բնակարանային ապահովման ծրագրի շահառու դառնալը:

Նման դրույթի նախատեսումը կնպաստի տեղահանված անձանց սոցիալ-կենցաղային կայունության ապահովմանը և կծառայի որպես լրացուցիչ երաշխիք՝ մարդու արժանապատվության և բնակության իրավունքի ապահովման գործում: